

Հավելված  
ՀՀ կառավարության 2012 թ.  
հունվարի 19-ի նիստի N 2  
արձանագրային որոշման

COOPERATION AGREEMENT

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

between

THE GOVERNMENT OF THE REPUBLIC  
OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

և

and

INTERNATIONAL FINANCE  
CORPORATION

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ

միջև

հունվար \_\_\_\_ 2012 թ.

January \_\_\_\_, 2012

AGREEMENT dated \_\_\_\_\_, 2012  
between:

2012թ. \_\_\_\_\_ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝

(1) THE GOVERNMENT OF THE  
REPUBLIC OF ARMENIA,  
HEREINAFTER "THE GOVERNMENT"  
(THE MINISTRY OF ECONOMY OF  
THE REPUBLIC OF ARMENIA,  
hereinafter "The Ministry" acting on  
behalf of the GOVERNMENT), and

(1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ՝ ԱՅՍՈՒՀԵՏ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (Ի ԴԵՄՍ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
այսուհետ՝ Նախարարություն), և

(2) INTERNATIONAL FINANCE  
CORPORATION, an international  
organization established by Articles of  
Agreement among its member  
countries, including the Republic of  
Armenia ("IFC").

(2) ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ՝ իր անդամ երկրների,  
այդ թվում՝ Հայաստանի  
Հանրապետության, միջև կնքված  
Համաձայնագրի Հոդվածների համաձայն  
ստեղծված միջազգային կազմակերպության  
(այսուհետ՝ ՄՖԿ)  
միջև:

#### WHEREAS

#### ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, ՈՐ

(A) IFC, a member of the World Bank  
Group, is an international  
organization whose mission is to  
promote sustainable private sector  
investment in developing countries,  
helping to reduce poverty and  
improve people's lives.

(Ա) Համաշխարհային բանկի խմբի անդամ  
ՄՖԿ-ն միջազգային կազմակերպություն է,  
որի առաքելությունն է զարգացող  
երկրներում մասնավոր հատվածում կայուն  
ներդրումները խթանելը, աղքատությունը  
հաղթահարելուն աջակցելը և մարդկանց  
կյանքը բարելավելը:

(B) IFC's Armenia Investment Climate  
Reform Project provides advisory  
services aimed to improve the  
investment climate in Armenia  
through reduction of the  
administrative burden and regulatory  
barriers for business in the areas of  
Taxation, Trade Logistics, Food Safety  
and Business Inspections and to help  
strengthen the development of the  
private sector in the Republic of  
Armenia and is managed by IFC's

(Բ) ՄՖԿ-ի Հայաստանում ներդրումային  
միջավայրի բարեփոխումների ծրագիրը  
մատուցում է խորհրդատվական  
ծառայություններ՝ հարկման,  
արտահանման ու ներմուծման,  
սննդամթերքի անվտանգության ու  
տեսչական ստուգումների ոլորտներում  
վարչարարական բեռի և կանոնակարգման  
արգելքների կրճատման միջոցով  
Հայաստանում ներդրումային միջավայրի  
բարելավման, ինչպես նաև մասնավոր  
հատվածի զարգացման խթանմանը  
աջակցելու նպատակով և կառավարվում է  
ՄՖԿ-ի Եվրոպայի և Կենտրոնական

Investment Climate Unit of the Europe and Central Asia Department (the "Program").

- (C) The Program is co-financed by the Austrian Ministry of Finance and Netherlands Ministry for Development Cooperation.
- (D) The Ministry is a state body of executive power whose purpose is to create conditions for stimulation of competition and balanced and sustainable development of the economy, as well as guarantee state economic security by economic policy development, realization, coordination and evaluation of the results.
- (E) The Ministry and IFC intend to cooperate in supporting activities of the Program set out in Annex A to this Agreement (hereinafter "Project") starting from February 1, 2012 to June 30, 2014.
- (F) The purpose of this Agreement is to set out the main terms and conditions of the cooperation.

THEREFORE, the Ministry and IFC (hereinafter jointly referred to as the "Parties" or severally as a "Party") hereby agree as follows:

**I. Project Objectives and Proposed Time Table**

- (a) The Project 's main objectives and the

Ասիայի Դեպարտամենտի Ներդրումային միջավայրի բաժնի կողմից (այսուհետ՝ Ծրագիր):

- (Գ) Ծրագիրը համաֆինանսավորվում է Ավստրիայի ֆինանսների նախարարության և Նիդերլանդների զարգացման համագործակցության նախարարության կողմից:
- (Դ) Նախարարությունը՝ գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որի նպատակն է տնտեսական քաղաքականության մշակման, իրականացման, համակարգման և արդյունքների գնահատման միջոցով ստեղծել պայմաններ մրցակցության խթանման և տնտեսության հավասարակշիռ և կայուն զարգացման, ինչպես նաև պետության տնտեսական անվտանգության ապահովման համար:
- (Ե) Նախարարությունը և ՄՖԿ-ն մտադիր են համագործակցել 2012թ. փետրվարի 1-ից մինչև 2014թ. սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում սույն Համաձայնագրի հավելված Ա-ում բերված Ծրագրի նպատակներին հասնելուն ուղղված միջոցառումների իրականացման (այսուհետ՝ Բարեփոխումներ) գործում:
- (Զ) Սույն Համաձայնագրի նպատակն է սահմանել այդ համագործակցության հիմնական պայմաններն ու ժամկետները:

ԵԼՆԵԼՈՎ ՎԵՐՈՇԱՐԱԴՐՅԱԼԻՑ,  
Նախարարությունը և ՄՖԿ-ն (այսուհետ՝ Կողմեր կամ առանձին-առանձին այսուհետ՝ Կողմ) սույնով համաձայնվում են հետևյալի մասին.

**I. Ծրագրի նպատակները և առաջարկվող ժամկետները.**

- (ա) Ծրագրի հիմնական նպատակները և

proposed time schedule are set out in Annex A hereto.

- (b) The Parties undertake to cooperate in good faith and implement all necessary activities in a timely manner according to the Agreement for the successful completion of the Project.

առաջարկվող ժամանակացույցը ներկայացված են սույն Համաձայնագրի հավելված Ա-ում,

- (բ) Կողմերը պարտավորվում են համագործակցել բարեխղճորեն և սահմանված ժամկետներում իրականացնել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ սույն Համաձայնագրին համապատասխան Ծրագրի հաջող իրականացման նպատակով:

## II. Project Implementation

### (a) IFC's Responsibilities:

- (1) Support the Ministry and the respective agencies assigned by the Ministry as beneficiaries of IFC's assistance (hereafter referred jointly as the "Agencies" or severally as "Agency") in their efforts to do reforms by providing recommendations on reforms' preparation, implementation and monitoring.;
- (2) Consult the Ministry in design and implementation issues of the selected areas, including:
  - Analysis of the existing legislation: review of laws, regulations and other legal documents and drafts of changes to the current laws (drafting new legal documents);
  - Process-analysis and design of proposals for process optimization – aiming at decreasing number of steps, time and cost of procedures;
  - Advice on setting up risk-based

## II. Ծրագրի իրականացումը.

### (ա) ՄՖԿ-ի պարտավորությունները.

- (1) աջակցել Նախարարության և նրա կողմից որպես ՄՖԿ-ի աջակցության շահառու որոշված համապատասխան գերատեսչությունների (այսուհետ՝ Գերատեսչություններ կամ առանձին-առանձին այսուհետ՝ Գերատեսչություն) Բարեփոխումների իրականացմանն ուղղությամբ ջանքերին՝ առաջարկություններ ներկայացնելով Բարեփոխումների նախագծման, իրականացման և դրանց ընթացքի վերահսկման վերաբերյալ,
- (2) ընտրված ոլորտներում Բարեփոխումների նախագծման և իրականացման հարցերում Նախարարությանը տրամադրել խորհրդատվություն, այդ թվում
  - գործող օրենսդրության վերլուծություն. օրենքների, կարգերի և այլ իրավական փաստաթղթերի վերանայում և առաջարկվող փոփոխությունների (կամ առաջարկվող նոր իրավական փաստաթղթերի) նախագծերի մշակում.
  - ընթացակարգերի քայլերի քանակի, ժամանակի և ծախսերի կրճատմանն ուղղված՝ գործընթացների օպտիմալացման նպատակով գործընթացների վերլուծություն և

- regulatory systems, especially in case of inspections, including regulations and implementing guidelines; and
- Recommendations on integrated solutions, leveraging on the global knowledge of the WBG;
- (3) Cooperate with the Ministry and other Agencies with the purpose of preparation and distribution of materials aimed at increasing the awareness of the public and private sectors of their rights and responsibilities;
- (4) Organize training of civil servants from the team who are assigned to work with IFC on implementation of reforms in the Project areas.
- (b) Ministry's Responsibilities:
- (1) Support IFC in its work with the respective Agencies to ensure positive results of reforms implementation;
- (2) Provide the list of experts from the staff of the Ministry and Agencies, who are directly involved in the implementation of the reforms, and who are assigned to work with IFC;
- (3) Support IFC in organizing and conducting seminars and round tables on reforms with the respective Agencies, as well as coverage in mass media;
- (4) Provide to IFC, all possible documents and information related to the Project, to the best of its
- առաջարկությունների մշակում.
- ռիսկի վրա հիմնված, մասնավորապես՝ ստուգումների դեպքում, կանոնակարգման համակարգերի ստեղծման վերաբերյալ խորհրդատվություն, ներառյալ կարգերի և իրականացման ուղեցույցների, և
  - առաջարկություններ համալիր լուծումների վերաբերյալ՝ Համաշխարհային բանկի խմբի փորձի և գիտելիքների կիրառմամբ,
- (3) համագործակցել Նախարարության և այլ գերատեսչությունների հետ՝ հանրության և մասնավոր հատվածի՝ իրենց իրավունքների և պարտականությունների մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված նյութերի պատրաստման և տարածման նպատակով,
- (4) համագործակցել Նախարարության և այլ գերատեսչությունների հետ՝ սույն Համաձայնագրի II(բ) կետով նախատեսված աշխատողների և փորձագետների վերապատրաստման նպատակով,
- (բ) Նախարարության պարտավորությունները.
- (1) աջակցել ՄՖԿ-ին համապատասխան գերատեսչությունների հետ աշխատանքներում Բարեփոխումների իրականացման գործում դրական արդյունքներ ապահովելու նպատակով,
- (2) ՄՖԿ-ին տրամադրել իր և Գերատեսչությունների՝ Բարեփոխումների իրականացման գործում անմիջականորեն ներգրավված այն աշխատողների և փորձագետների ցանկը, ովքեր նշանակվել են ՄՖԿ-ի հետ համագործակցելու,
- (3) աջակցել ՄՖԿ-ին համապատասխան Գերատեսչությունների հետ միասին Բարեփոխումների վերաբերյալ

ability, as well as requiring the Agencies to provide the document and information.

սեմինարներ ու կլոր սեղաններ կազմակերպելու և անցկացնելու, ինչպես նաև լրատվամիջոցներում լուսաբանման հարցերում,

- (4) իր կարողության սահմաններում, ՄՖԿ-ին տրամադրել Ծրագրի ոլորտներին առնչվող հնարավոր բոլոր փաստաթղթերը և տեղեկատվությունը, ինչպես նաև ապահովել դրանց տրամադրումը համապատասխան գերատեսչությունների կողմից,

### **III. Assistance from Consultants**

- (a) The Parties have agreed that certain tasks related to the implementation of the Project can be best completed by international and/or local experts and/or companies (the “Consultants”) to be selected by IFC.
- (b) IFC will make arrangements to select the Consultants in accordance with IFC’s internal procedures and World Bank Group procurement guidelines whenever the service of Consultants is considered necessary. Following selection, IFC will enter into an agreement with the Consultants (the “Consultant Agreement”).
- (c) The Consultants will report directly to IFC on all matters. Upon IFC’s request, the Ministry will promptly provide the Consultants with, and ensure that the respective Agencies will also provide to the Consultants with, all the documents, information and assistance that the Consultants may need to fulfill their mission in a prompt and effective manner.

### **III. Խորհրդատուների աջակցությունը.**

- (ա) Կողմերը համաձայնվում են, որ Ծրագրի իրականացման հետ կապված որոշ աշխատանքներ կարող են լավագույնս կատարվել միջազգային և/կամ տեղական փորձագետների և/կամ ընկերությունների (այսուհետ՝ Խորհրդատուներ) կողմից, որոնք կընտրվեն ՄՖԿ-ի կողմից,
- (բ) Խորհրդատուների ծառայություններին անհրաժեշտությունն առաջանալուն պես, ՄՖԿ-ն կձեռնարկի բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ՄՖԿ-ի ներքին ընթացակարգերի և Համաշխարհային բանկի խմբի գնումների կանոնակարգերի համաձայն Խորհրդատուներին ընտրելու համար: Ընտրելուց հետո, ՄՖԿ-ն համապատասխան պայմանագրեր կկնքի Խորհրդատուների հետ (Խորհրդատուի պայմանագիր),
- (գ) Խորհրդատուները բոլոր հարցերով հաշվետու կլինեն անմիջապես ՄՖԿ-ին: ՄՖԿ-ի պահանջով Նախարարությունը անհապաղ կտրամադրի Խորհրդատուների կողմից իրենց առաքելությունը արագ և արդյունավետորեն իրականացնելու համար պահանջվող բոլոր փաստաթղթերը, տեղեկատվությունը և աջակցությունը, ինչպես նաև կապահովի դրանց անհապաղ տրամադրումը համապատասխան Գերատեսչությունների կողմից:

#### **IV. Budget and Contributions to the Project**

(a) The budget for the Project ("Budget") is estimated to be USD 1,981,800 (One Million Nine Hundred Eighty One Thousand Eight Hundred US Dollars).

(b) The contributions to cover costs incurred in accordance with the Budget are as follows:

(1) Contributions by IFC:

IFC will provide cash in the amount of USD 1,800,000 (One Million Eight Hundred Thousand US Dollars) necessary for fulfillment of IFC's responsibilities under Section II(a) of this Agreement.

(2) Contributions by the Government: Government will provide in-kind contribution (staff time) estimated at 181,800 USD (One Hundred Eighty One Thousand Eight Hundred United States Dollars) (including the social security payments paid by the Employer) as necessary for fulfillment of its responsibilities under Section II(b) of this Agreement. This will include:

- 8 staff members of the Ministry (4 from its Doing Business reform unit and 4 from its Inspection reform unit), with average monthly salary of 270 USD. The aggregate expense for staff salaries over 3 years will be around 77,760 USD (8x270x12x3);

#### **IV. Ծրագրի բյուջեն և ներդրումները Ծրագրում.**

(ա) Ծրագրի բյուջեն (այսուհետ՝ Բյուջե) կազմում է 1,981,800 (մեկ միլիոն ինը հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր) ԱՄՆ դոլար,

(բ) Բյուջեին համապատասխան կատարվելիք ծախսերի ծածկման համար ներդրումները հետևյալն են.

(1) ՄՖԿ-ի ներդրումը.

ՄՖԿ-ն կհատկացնի 1,800,000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ԱՄՆ դոլար կանխիկով, որն անհրաժեշտ է սույն Համաձայնագրի II(ա) կետով սահմանված՝ ՄՖԿ-ի պարտավորությունների կատարման համար,

(2) Կառավարության ներդրումը.

Կառավարությունը կծախսի 181,800 (հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր) ԱՄՆ դոլար բնական (անձնակազմի ծախսած ժամանակի) տեսքով(ներառյալ գործատուի կողմից վճարվող սոցիալական ապահովության վճարները), որն անհրաժեշտ է սույն Համաձայնագրի II(բ) կետով սահմանված Կառավարության պարտավորությունների կատարման համար: Այն ներառում է՝

- Նախարարության 8 աշխատակիցներ (4-ը գործարար միջավայրի բարեփոխումների բաժնից և 4-ը տեսչական բարեփոխումների բաժնից), որոնց միջին աշխատավարձը 270 ԱՄՆ դոլար է: 3 տարվա ընթացքում նշված անձանց աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն մոտավորապես 77,760 ԱՄՆ

- 6 staff members of the respective agencies, with average monthly salary of 270 USD. The aggregate expense for staff salaries over 3 years will be around 58,320 USD (6x270x12x3);
  - 2 staff members of the State Revenue Committee (1 on Tax issues and 1 on Customs issues) with average monthly salary of 500 USD. The aggregate expense for staff salaries over 3 years will be around 36,000 USD (2x500x12x3);
  - 1 staff member of the Ministry of Finance (on Tax issues) with average monthly salary of USD 270 to work with Project team and Ministry's DB reform team. The aggregate expense for staff salaries over 3 years will be around USD 9,720 (1x270x12x3).
- (c) The Parties undertake to consult with each other on the status of Project implementation, on a monthly basis, or such other periodic basis as they shall agree to in writing.

դոլար (8x270x12x3),

- համապատասխան Գերատեսչությունների 6 աշխատակիցներ, որոնց միջին աշխատավարձը 270 ԱՄՆ դոլար է: 3 տարվա ընթացքում նշված անձանց աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն մոտավորապես 58,320 ԱՄՆ դոլար (6x270x12x3),
- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 2 աշխատակից (1-ը հարկային հարցերով և 1-ը մաքսային հարցերով), որոնց միջին աշխատավարձը 500 ԱՄՆ դոլար է: 3 տարվա ընթացքում նշված անձանց աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն մոտավորապես 36,000 ԱՄՆ դոլար (2x500x12x3),
- ՀՀ ֆինանսների նախարարության 1 աշխատակից (հարկային հարցերով), որի միջին աշխատավարձը 270 ԱՄՆ դոլար է: 3 տարվա ընթացքում նշված անձի աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն մոտավորապես 9,720 ԱՄՆ դոլար (1x270x12x3),

(գ) Կողմերը պարտավորվում են ամսական կտրվածքով կամ գրավոր համաձայնեցված այլ պարբերականությամբ խորհրդակցել միմյանց հետ՝ Ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ:

**V. Impact Measurement**

(a) The Ministry acknowledges that, in accordance with IFC's internal procedures, the Project's performance should be evaluated by using development and activity other indicators. To ensure the effectiveness of such assessment, the Ministry agrees to provide IFC with the access to the Ministry's

**V. Ազդեցության գնահատում.**

(ա) Նախարարությունը ընդունում է, որ, ՄՖԿ-ի ներքին ընթացակարգերին համապատասխան, Ծրագրի իրականացումը պետք է գնահատվի զարգացման և գործունեության այլ ցուցանիշների կիրառմամբ: Այդ գնահատման արդյունավետությունը ապահովվելու նպատակով, Նախարարությունը համաձայնվում է



information and records, as necessary, to establish the baseline data to serve for the subsequent measurement of the Project's performance at the initial stage of the Project.

- (b) The development and activity other indicators are set out in Annex B. The Ministry further undertakes to provide to IFC during the lifetime of the Project such data and other feedback as IFC shall reasonably request to enable IFC to measure the Project's performance. The Ministry also agrees to meet with potential external evaluators of the Project.

## **VI. Termination**

- (a) The Ministry has the right to terminate this Agreement, without cause, by giving IFC written notice at least thirty (30) calendar days prior to the effective date of termination. In such case the Ministry shall indemnify IFC for its involvement in the Project by reimbursing IFC all costs (including, but not limited to, travel, accommodation, subsistence and communication) incurred by IFC staff up to the effective date of termination. The Ministry shall also promptly (and in any event within thirty (30) calendar days of IFC's written request) reimburse IFC for all amounts already paid by IFC or which may be due by IFC to the Consultants under the Consultant Agreement, or as a result of the termination thereof.

Ծրագրի սկզբնական փուլում ՄՖԿ-ին հասանելի դարձնել Նախարարության ունեցած այն տեղեկատվությունը ու գրանցումները, որոնք անհրաժեշտ կլինեն ելակետային ցուցանիշները որոշելու համար՝ հետագայում դրանց համեմատ Ծրագրի գործունեությունը գնահատելու նպատակով,

- (բ) Զարգացման և գործունեության այլ ցուցանիշները սահմանված են Հավելված Բ-ում: Նախարարությունը պարտավորվում է նաև Ծրագրի ամբողջ ընթացքում ՄՖԿ-ին տրամադրել նման տվյալներ, ՄՖԿ-ի կողմից պահանջվող ողջամիտ այլ արձագանքներ, որոնք հնարավորություն կտան ՄՖԿ-ին գնահատելու Ծրագրի գործունեությունը, ինչպես նաև հանդիպել Ծրագրի հնարավոր արտաքին գնահատողների հետ:

## **VI. Համաձայնագրի գործողության դադարեցում.**

- (ա) Նախարարությունը իրավունք ունի, առանց պատճառների մեկնաբանման, վաղաժամկետ դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ դադարեցման օրից առնվազն 30 (երեսուն) օրացուցային օր առաջ գրավոր ծանուցելով ՄՖԿ-ին: Այդ դեպքում, Նախարարությունը պարտավոր է փոխհատուցել ՄՖԿ-ին Ծրագրում իր ներգրավվածության հետ կապված մինչև դադարեցման օրը ՄՖԿ-ի աշխատակիցների կատարած բոլոր ծախսերը (որոնք ներառում են, բայց չեն սահմանափակվում ճանապարհորդելու, գիշերավարձի, օրապահիկի և հեռահաղորդակցության ծառայությունների հետ կապված ծախսերով): Բացի այդ, Նախարարությունը պետք է անհապաղ (սակայն, ամեն դեպքում, ոչ ուշ քան ՄՖԿ-ի գրավոր պահանջը ստանալուց հետո 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում)

(b) IFC has the right to terminate this Agreement, without cause, by giving the Ministry written notice at least thirty (30) calendar days prior to the effective date of termination. In such case the Ministry shall be relieved from any obligation to make payment of the amounts due by IFC to the Consultants pursuant to the Consultant Agreement.

(c) Upon thirty (30) calendar days' prior written notice, either Party may terminate this Agreement as a result of the failure by the other Party to fulfill any obligation hereunder. Nothing herein shall be construed as a waiver of any remedy which may be available pursuant to applicable laws.

(d) IFC may suspend or terminate this Agreement upon thirty (30) calendar days written notice if at any time IFC reasonably believes that any representative of the Ministry (or any recipient of IFC's funds with respect to the Project) has engaged in corrupt, fraudulent, coercive, collusive or obstructive practices ("Sanctionable Practices") in connection with the use of IFC's funds for this Project.

փոխհատուցի ՄՖԿ-ին իր կողմից  
Խորհրդատուի պայմանագրի համաձայն  
կամ դրա գործողությունը վաղաժամկետ  
դադարեցնելու արդյունքում  
Խորհրդատուներին վճարված կամ  
վճարվելիք գումարները,

(բ) ՄՖԿ-ն իրավունք ունի, առանց  
պատճառների մեկնաբանման,  
վաղաժամկետ դադարեցնել սույն  
Համաձայնագրի գործողությունը՝  
դադարեցման օրից առնվազն 30 (երեսուն)  
օրացուցային օր առաջ գրավոր ծանուցելով  
Նախարարությանը: Այդ դեպքում,  
Նախարարությունը ազատվում է  
Խորհրդատուի պայմանագրի համաձայն  
ՄՖԿ-ի կողմից Խորհրդատուներին  
վճարվելիք գումարների վճարման հետ  
կապված որևէ պարտավորությունից,

(գ) Կողմերից յուրաքանչյուրը, մյուս Կողմի  
սույն Համաձայնագրով ստանձնած որևէ  
պարտավորություն չկատարելու դեպքում,  
իրավունք ունի վաղաժամկետ դադարեցնել  
սույն Համաձայնագրի գործողությունը՝ 30  
(երեսուն) օրացուցային օր առաջ գրավոր  
ծանուցելով մյուս Կողմին: Սույն  
Համաձայնագրի որևէ դրույթ չի կարող  
մեկնաբանվել որպես կիրառելի  
օրենսդրությամբ ընձեռնվող՝ իրավունքների  
պաշտպանության միջոցներից  
հրաժարում,

(դ) Ցանկացած պահի, երբ հիմնավոր  
ենթադրություններ կան առ այն, որ  
Նախարարության որևէ ներկայացուցիչ  
(կամ Ծրագրի հետ կապված ՄՖԿ-ի  
միջոցների ցանկացած այլ ստացող)  
ներգրավված է ՄՖԿ-ի սույն Ծրագրի  
համար նախատեսված միջոցների  
օգտագործման հետ կապված  
կաշառակերության, խարդախության,  
բռնության, հանցավոր համաձայնության  
կամ օբստրուկտիվ/խոչընդոտող

(e) Notwithstanding anything herein or elsewhere to the contrary, the provisions of Sections VI, VIII, IX, X, XI, XII and XIV shall survive the termination of this Agreement.

գործողություններում (Պատասխանատվություն առաջացնող գործողություններ), ՄՖԿ-ն կարող է կասեցնել կամ վաղաժամկետ դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ 30 (երեսուն) օրացուցային օր առաջ գրավոր ծանուցելով Նախարարությանը,

(ե) Անկախ սույն Համաձայնագրում կամ այլուր որևէ հակառակ դրույթի առկայությունից, VI, VIII, IX, X, XI, XII և XIV բաժինների դրույթները ուժի մեջ են մնում նաև սույն Համաձայնագրի գործողությունը դադարելուց հետո:

## **VII. Authorizations**

The Ministry is obliged to obtain and maintain in effect at all times all governmental, administrative, corporate and other authorizations necessary for the full implementation of this Agreement and the Consultant Agreement.

## **VII. Թույլտվություններ և համաձայնություններ.**

Նախարարությունը պարտավորվում է ստանալ սույն Համաձայնագրի և Խորհրդատուի պայմանագրի լիարժեք կատարման համար անհրաժեշտ բոլոր պետական, վարչարարական, կորպորատիվ և այլ թույլտվությունները և/կամ համաձայնությունները ու միշտ ապահովել դրանց ուժի մեջ լինելը:

## **VIII. Reports and Documents**

All reports and documents prepared by, or with the assistance of IFC, may be distributed by the Ministry as needed among its employees and officers, and to the Agencies, their employees and officers, however to the third parties may only be distributed with the prior written consent of IFC and with the insertion of such disclaimers as IFC shall request.

## **VIII. Հաշվետվությունները և փաստաթղթերը.**

ՄՖԿ-ի կողմից կամ նրա աջակցությամբ պատրաստված բոլոր հաշվետվությունները և փաստաթղթերը Նախարարությունը, ըստ անհրաժեշտության, կարող է տրամադրել իր աշխատողներին և պաշտոնյաներին, ինչպես նաև Գերատեսչություններին, դրանց աշխատողներին և պաշտոնյաներին, սակայն երրորդ կողմերին կարող է տրամադրել միայն ՄՖԿ-ի նախնական գրավոր համաձայնության դեպքում և ՄՖԿ-ի կողմից պահանջվող ձևի՝ պատասխանատվության սահմանափակման վերաբերյալ դրույթների ներառմամբ:

## **IX. Presentation of IFC's Viewpoints and Use of IFC's Name, Marks and**

## **IX. ՄՖԿ-ի տեսակետերի ներկայացումը և ՄՖԿ-ի անվանման, նշանների և լոգոների**

**Logo.**

- (a) The Ministry agrees that it shall not present, or permit the presentation of, IFC’s viewpoints without the prior written consent of IFC.
- (b) The Ministry further agrees that it shall not use, or permit other persons to use IFC’s name, marks or logos in any advertisement, promotional literature or information without the prior written consent of IFC, and if such consent is provided that it shall use the name, marks and logos strictly in accordance with the permission provided and with the insertion of such disclaimers as IFC shall request.

**օգտագործումը.**

- (ա) Նախարարությունը պարտավորվում է չներկայացնել ՄՖԿ-ի տեսակետերը կամ չթույլատրել այլ անձանց կողմից դրանց ներկայացումը առանց ՄՖԿ-ի նախնական գրավոր համաձայնության,
- (բ) Նախարարությունը պարտավորվում է նաև չօգտագործել ՄՖԿ-ի անվանումը, նշանները և լոգոները որևէ հայտարարությունում, գովազդային գրականությունում կամ տեղեկատվությունում կամ չթույլատրել այլ անձանց կողմից այդպիսի օգտագործումը առանց ՄՖԿ-ի նախնական գրավոր համաձայնության, իսկ նման համաձայնություն ստանալու դեպքում, օգտագործել ՄՖԿ-ի անվանումը, նշանները և լոգոները տրված թույլտվության պայմաններին համապատասխան և ՄՖԿ-ի կողմից պահանջվող ձևի պատասխանատվության սահմանափակման վերաբերյալ դրույթների ներառմամբ:

**X. Intellectual Property Rights**

- (a) Definitions.
  - (1) “Materials” means information, data, databases, charts, graphics, photographs, reports, audio materials, video materials, audio-visual materials, software, applications, inventions, technology, and other materials of any form.
  - (2) “New Materials” means all Materials created in connection with the Project and all related Intellectual Property Rights.
  - (3) “Pre-existing Materials” means any

**X. Մտավոր սեփականության իրավունք.**

- (ա) Սահմանումներ:
  - (1) «Նյութեր» նշանակում է տեղեկատվություն, տվյալներ, տվյալների բազաներ, գծապատկերներ, գծագրեր, լուսանկարներ, հաշվետվություններ, ձայնագրություններ, տեսաժապավեններ, տեսալսողական նյութեր, համակարգչային ծրագրեր, հայտեր, գյուտեր, տեխնոլոգիաներ եւ այլ նյութեր՝ ցանկացած տեսքով:
  - (2) «Նոր նյութեր» նշանակում է այն բոլոր նյութերը, որոնք ստեղծվել են Ծրագրի կապակցությամբ ու Մտավոր սեփականության բոլոր հարակից իրավունքները:
  - (3) «Նախապես գոյություն ունեցող նյութեր»

Materials and all related Intellectual Property Rights owned by one of the Parties prior to the date of this Agreement.

նշանակում է ցանկացած նյութ ու Մտավոր սեփականության բոլոր հարակից իրավունքները, որոնց տիրապետում էր Կողմերից որեւէ մեկը՝ նախքան սույն Համաձայնագրի գործողության մեջ մտնելը:

(4) “Third Party Materials” means any Materials and all related Intellectual Property Rights owned by a party other than the Parties.

(4) «Երրորդ կողմի նյութեր» նշանակում է ցանկացած նյութ ու Մտավոր սեփականության բոլոր հարակից իրավունքները, որոնց տիրապետում էր Համաձայնագրի Կողմ չհանդիսացող որեւէ կողմ:

(5) “Intellectual Property Rights” means rights in intellectual property, such as copyright, patent, trademark, trade secret and other proprietary rights.

(5) «Մտավոր սեփականության իրավունք» նշանակում է մտավոր սեփականության իրավունքներ, ինչպիսիք են՝ հեղինակային իրավունքը, արտոնագիրը, ապրանքանիշը, առետրային գաղտնիքը եւ գույքային այլ իրավունքները:

(b) Ownership and License of New Materials.

(բ) Նոր Նյութերի սեփականության իրավունք ու լիցենզիա:

(1) All New Materials created in connection with the Project, along with all related Intellectual Property Rights, shall be solely owned by the Ministry.

(1) Բոլոր Նոր Նյութերը, որոնք ստեղծվել են Ծրագրի կապակցությամբ, Մտավոր սեփականության բոլոր հարակից իրավունքների հետ միասին, հանդիսանալու են բացառապես Նախարարության սեփականությունը:

(2) The Ministry hereby grants to IFC a world-wide, non-exclusive, fully paid up license to use, produce, reproduce, create derivative work of, and distribute the New Materials in connection with its developmental role. The Parties agree that any derivative work created based on the New Materials shall be the property of the Ministry.

(2) Սույն Համաձայնագրով Նախարարությունը ԱՖԿ-ին շնորհում է Նոր Նյութերը օգտագործելու, պատրաստելու, վերատպելու, աժանցյալ աշխատություններ ստեղծելու եւ տարածելու համընդհանուր, ոչ բացառիկ, ամբողջովին վճարված լիցենզիա՝ նրա, որպես զարգացնողի, դերի կապակցությամբ: Կողմերը համաձայն են, որ Նոր Նյութերի հիման վրա ստեղծված ցանկացած աժանցյալ աշխատություն հանդիսանալու է Նախարարության սեփականությունը:

(c) Pre-Existing Materials.

For clarification purposes, all Materials owned by the Ministry or IFC prior to the date of this Agreement and used in

(գ) Նախապես գոյություն ունեցող նյութեր: Պարզաբանման կարգով. նախքան սույն Համաձայնագրի գործողության մեջ մտնելը,

connection with the Project, and all related Intellectual Property Rights, due to circumstances, shall remain the sole property of the Ministry or IFC. Each Party grants to the other a non-exclusive, fully paid-up license, without any right to sub-license, to use such Pre-existing Materials and related Intellectual Property Rights, solely as needed for the other Party to perform its obligations required under this Agreement or to exercise the rights granted to such Party herein.

(d) Third Party Claims. Should any third party make any allegation that any New Materials violate any Third Party Materials, the Party who first learns about such allegation shall promptly notify the other Party and the Parties shall in good faith promptly discuss a response to such third party claim.

(e) Work for Other Clients. Notwithstanding any other term of this Agreement, IFC shall have the final, non-exclusive right and license to use and otherwise exploit the advice provided by IFC to the Ministry for the benefit of IFC's other clients and in other projects in which IFC cooperates, as well as to allow such other IFC's clients to use such advice in connection with their respective business activities.

## **XI. Disclaimers**

Նախարարության կամ ՄՖԿ-ի ունեցած բոլոր Նյութերը, որոնք օգտագործվել են Ծրագրի կապակցությամբ եւ Մտավոր սեփականության բոլոր հարակից իրավունքները, հանգամանքներից կախված, հանդիսանալու են բացառապես Նախարարության կամ ՄՖԿ-ի սեփականությունը: Կողմերից յուրաքանչյուրը մյուսին շնորհում է ոչ բացառիկ, ամբողջովին վճարված լիցենզիա՝ առանց ենթա-լիցենզիայի իրավունքի, նման Նախապես գոյություն ունեցող նյութերը եւ Մտավոր սեփականության հարակից իրավունքները օգտագործել բացառապես երբ մյուս Կողմին անհրաժեշտ է կատարել սույն Համաձայնագրով նախատեսված իր պարտականությունները կամ իրականացնել նման Կողմին շնորհված իրավունքները:

(դ) Երրորդ Կողմի հայցերը: Եթե ցանկացած երրորդ կողմ հայտարարություն անի, որ ցանկացած Նոր Նյութ խախտում է ցանկացած Երրորդ Կողմի Նյութերը, ապա այն Կողմը, որն առաջինն է իմացել նման խախտման մասին, անմիջապես ծանուցում է մյուսին եւ Կողմերը անմիջապես բարեխղճորեն քննարկում են երրորդ կողմի նման հայցի պատասխանը:

(ե) Աշխատանք այլ հաճախորդների համար: Անկախ սույն Համաձայնագրի որեւէ այլ պայմանից, ՄՖԿ ունենալու է վերջնական, ոչ բացառիկ իրավունք ու լիցենզիա՝ օգտագործելու կամ որեւէ այլ կերպ գործածելու ՄՖԿ-ի կողմից Նախարարությանը տրված խորհրդատվությունը՝ ի շահ ՄՖԿ-ի այլ հաճախորդների եւ այն ծրագրերի, որոնցում համագործակցում է ՄՖԿ, ինչպես նաեւ թույլատրելու ՄՖԿ-ի այլ հաճախորդներին օգտագործել նման խորհրդատվությունը՝ նրանց համապատասխան քիզնես գործունեության կապակցությամբ:

## **XI. Պատասխանատվության սահմանափակում.**

- (a) IFC makes no express or implied representation or warranty as to the accuracy, completeness or sufficiency of any reports, analyses or memoranda prepared by, or with the assistance of, IFC or the Consultants.
